

խրախճանութիւնը Ասորոց (Յղթ. ԺԳ, 2-4), Հոովմայեցւոց (Դար. Ա, 1374), Բիւզանդացւոց (Ոսկ. Թղթ. Ա, 534) եւ այլոց: Մտադրութեան արժանի է Փաւստոսի բացատրութիւնը՝ թէ Դրաստամատ Արշակայ առջեւ «եղ գինի՝ որպէս օրէն էր քագաւորացն» (207), եւ որովհետեւ այդ գինիէն խելացնորեցաւ, կը հետեւի՝ որ անոր անչափութիւնն իսկ՝ — զի չափաւորն ամէն տուն ալ ունէր՝ — հետեւանօքն հանդերձ «օրէն» կամ հաստատուն սովորութիւն էր ամէն արքունական կոչնոց մէջ, որոյ ակնարկութիւնը տեսանք Վարազդատայ անսովոր զգուշաւորութեան մէջ եւս (աստ, 218): Եւ բացարձակապէս ճշմարիտ է այս. այնպէս որ Խորենացին ուզելով ներբողել զՏիգրան Ա, զայն կը կոչէ «պարկեշտն ի կերակուրս եւ յըմպելիս» (50), որպէս թէ սակաւագիւտ առաքինութիւն մը լինէր այս՝ Հայոց թագին ժառանգորդաց մէջ. եւ զոր յետոյ Յովհաննէս կթղալ կը կրկնէ Աշոտ բագրատունոյ մասին՝ ըսելով, «առ կերակուրս խրախճանաց օրինաւոր» (175): Նաեւ Կորիւն նկարագրելով երբեմն զինուորական Մաշտոցի ճգնութիւնն անապատային նոր կենացը մէջ, կը յարէ՝ թէ «անդ էր այնուհետեւ չարբենալ գինւով» (23), եւ զոր կը կրկնէ